



ՕՐԱԿԻՐ

# ԵՎՐՈՅԵՆ, ԲԵԼՈՒՇԵՆ, ՏԵՂԵԿԵՆ

ԵՒ

ԲՆԵԿԵՆ ԳԻՏԵԼԵԸ

Դ. ՏԱՐԻ, ԹԻՒ 13.

1846

ՑՈՒԿԱՄ 1.

## ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

Բարոյական իրադիրել :

ԱՅՍ Խրատներուս հեղինակին անունը չենք գիտեր, բայց լեզուին ոճը կը ցուցընէ որ մեր միջին դարու գըրուածներէն է : Չուզեցինք փոխել ռամկօրէն զուրցուածքին ոճը, որպէս զի հարազատութեանը հետքաղցրութիւնն ալպահուի . գրողին դիտմունքը ամենուն հասկանալի ընելն եղերէ . ուստի մեզի ալ մնաց զանոնք օգտակար ընելու փափաքը :

ԱՅՍ չորք իրաց տայ Աշտուած մարդոյն մեծութիւն և պարոնութի . նախ թէ բարի մարդ է՝ ընտրէ Աշտուած ու տայ յիւր ձեռն մեծութի , որ կարօտելոց որբոց և այրեաց և աղքատաց՝ զերդ հայր լինի , և աշխարհի շինութի , և այս կենօքս զայն կեանքն շահի . զոր օրինակ թագաւորք ընտրեն զլաւ մարդն և 'ի հարկեց բանի և գործի վրայ դնեն : Երկրորդ , և չար մարդոյն վասն այն տայ մեծութիւն՝ որ պատասխանի չունենայ 'ի դատաստանի օրն և ասէ , թէ ինձ ինչ ձեռն եր տուեալ որ ես կարէի

բարի գործել : Երրորդն , այնոր համար տայ Աշտուած վատ մարդոյն մեծութիւն , որ միթէ այն իրօքն Աշտուած գառնայ և ասէ , թէ որ զայս մեծութիւնս ետ ինձ , ես զնորա պատուիրանն պահեմ զի և այլ ևս տացէ յայս կեանքս , և անդ զկեանքն յաւի տենից . զինչ որ մէկ մի զտիմմար տըղայն որ ուզէ թէ ընտելցընէ և սովորեցընէ որ յինքն գայ՝ ինծորով կամ այլ աղուոր իրօք : Աղրրորդ , այնպիսի մարդկանցն տայ Աշտուած հարստութիւն՝ որ իւր գործքն ամէնն չար է և մին իրք բարի լինի գործել , նա տայ իւրն մեծութիւն 'ի յայս կեանքս՝ որ զիւր բարին վճարէ , որ յայն կեանքն չունենայ այլ ակն բարւոյ , որպէս 'ի սուրբ աւետարանն է գրած վասն Անձատանն և Պազարոսին :

Երւ վասն չորք իրաց լինի աղքատութիւն . Կախ այն է որ զկէսք մի աղքատ արար Աշտուած , որ զարքայութիւն մեծատանցն վաճառեն . զի որ աղքատին ողորմութիւն առնէ՝ զայն իւր 'ի փոխ համարի Աշտուած ,

և ինքն վճարե որ ողորմածն է : Եւ երկրորդ այն է , որ զինչ զոսկին կրակով փորձեն թէ լաւ է և թէ վատ , նոյնպէս և Աստուած աղքատութք փորձէ զմարդն թէ լաւ է և թէ վատ թէ համբերող , և յայն կեանքն տայ Աստուած իւրն երկնաւոր մեծութի , և յայս կեանքն այլ՝ բարի մարդկանց օրինակ լինին : Երրորդն այն է , որ լաւ մարդն որ մեծութիւն ունի՝ Աստուած աղքատացուցանէ , և այնու փորձէ թէ վասն իրաց կուսիրէ զԱստուած թէ յաղքատութեան ալնոյնն է , նա Աստուած ցուցանէ զայն մարդկան բարեգործութիւն , որպէս Յուրայն : Որրորդ , վասն այն լինին կէսք աղքատք՝ որ ամէն գործքն բարի են ու մին մեղք է գործել , նա վասն այն մեղացն չարչարի որ քաւի . որ երբ յայն կեանքն երթայ , նա սուրբ և արդար ժառանգէ զերկնից արքայութի :

ԱԱՐԴ որ ամէն պատկերն գեղեցիկ լինի՝ և տեղիք մի խոռ կենայ , կամ աչքն կամ ականջն կամ ձեռն կամ այլ տեղի , նա զանունն յայն տեղացն ձայնեն , կամ կոյր ասեն կամ կաղ կամ խուլ . թէպէտե ամէն տեղի լաւ լինի : Նոյնպէս և հոգին , թէ յամենայն մեղաց սուրբ լինի և 'ի մին մեղացն չպահէ զինքն , նա զայն մեղացն անունն տան , կամ գող կամ զրկող կամ շնացող կամ զինչ լինի , նա այն մին մեղքն զշատ բարի անունն ծածկէ . զոր օրինակ սակաւ մի օշինդր զբազում մեղրին համն դառնացընէ , և փոքր մի քացախ զբոլոր կարասն քացախ առնէ :

Ի Թագաւորին յաշխարհն յոր տեղ լինի մարդն՝ 'ի ներքոյ հրամանաց թագաւորին է . բայց որ զերեսն ուզետեսանել՝ 'ի դարպասն երթայ . նոյն պէս մարդն յամենայն աշխարհ յոր տեղ լինի և իւրն աղօթք կուառնէ՝ ընդ Աստութոյ իշխանութեամբն է . բայց որ զԱստութոյ երեսն ուզէ որ տեսնու՝ յիւր դարպասն երթայ , յԱս-

տուծոյ տունն՝ որ է եկեղեցին :

ԱԱՐԴ որ զիւր պարոնն անարգէ կամ զիւր թագաւորն՝ մեռանի . իսկ որ զԱստուած անարգէ՝ ընդէ՞ր ոչ մեռանի , կամ յայս կեանքս պատուհասի կամ յայս կեանքն տանջանօք : Եւ զԱստուած այլ ով անարգէ քան թէ յիշոցնատուն . հաւատն՝ աստուածային է , և պաշտելիքն Աստուած է , և կնունքն՝ Աստութոյ հոգին , և բերանն՝ հաղորդաման , և հաղորդն՝ Աստուած , և մեռելի գերեզմանն՝ խաչւ և աւետարանաւ կնքած է . որ զայսնք անարգէ՝ զԱստուած անարգէ :

Դրախտ մի շատ ցեղ ու ցեղ տունկ լինի տնկած 'ի մէկ հող և մէկ ջրով մնանին , բայց դրախտին տէրն յամէն տնկոց զիւր պտուղն ուզէ . նոյնպէս աշխարհս դրախտ է Աստութոյ , և մարդիկ տունկ են Աստութոյ , յամենէն զիւր պտուղն խնդրէ : Այլքահանային , իշխանին և թագաւորին պտուղն այս է , որ հարստին երես չառնէ , զուղորդն ուզորդ առնէ և զանիրաւն սուտ . 'ի քահանայից խընդրէ սրբութիւն , պարկեշտութիւն , լինելօրինակ բարի առաքինութեամբ և սուրբ աղօթք , և իւրեանց սուրբ աղօթքն՝ սիւնք են աշխարհիս և պահպանութի : Յորժամայս երկու իրքս պակասի յաշխարհէս՝ նա անցնի աշխարհս :

ԿՄԱՆ է մարդ ծառոյ . և որպէս ջուր ծառոյս օգուտ է , նոյնպէս և աղօթք անձին մարդոյ . և որպէս տերեն կանանչ պայծառութիւն է ծառոյն՝ նոյնպէս և աղօթքիրութիւն մարդոյ . արդ եթէ մի ինչ գտանի պակաս յայսցանէ , ծառն ոչ առնու արմատ . նոյնպէս և մարդ թէ այսպէս ոչ գործէ՝ ոչ գտանի նա կատարեալ :

ԱԱԿՈՒԹԻՒՆ երեք իրօք է գովելի . առաջին այն է , որ բարիք որ յԱ-

տուծոյ առելէ՝ ամուր պահէ և չկո-  
րուսանէ . Երկրորդ , որ՝ ի պատերազմ  
մտեալէ՝ արի կենայ և ցաղթի . Եր-  
րորդ , իրք որ խոստացած է իւր՝ ջան  
դնէ որ չզբկի : Իւրին որ առեալէ  
յլ խտուծոյ այն է , որ հոգւով պատ-  
կեր է լի խտուծոյ , և է սուրբ և անմեղ  
և անմահ . հոգին չկորուսանէ զպատ-  
կերին գեղեցկութիւն և նման լինի  
անասնոց : Պատերազմի ընդ մեզ սա-  
տանայ . իբրև զմանուկ արիացիր և  
յաղթէ և մի յաղթիր և խոց աւնուր  
՚ի մեղաց : Եւ լի խտուած խոստացելէ  
զարքայութիւն և հանգիստ յաւիտե-  
նական . ջանա և փութացիր մտանել  
՚ի յայն հանգիստն :

Ո՞ր բան է լի խտուծոյ հաճոյ և հո-  
գոյն շահ և մարմնոյն հանգիստ . —  
Իւանն որ ՚ի սուրբ գրոց է մարգա-  
րէից և յառաքելոց և հայրապետաց ,  
այն է մեզ օգուտ և լի խտուծոյ հա-  
ճոյ . զի սուրբքն զիւրեանք ՚ի մեղաց  
սրբեցին և զլի խտուծոյ հոգին իւրեանք  
ընկալան . նոցա բանն լի խտուծոյ հո-  
գոյն է , և որ չգիտէ և յիւր մտացն  
խօսի՝ նա հերձուած է և մեղք : Լի պա-  
զաշխարհիս խելաց բանն ՚ի ծերոց  
հարցիր՝ որ շատ են ապրել և զամէնն  
փորձել . և ՚ի ձանապարհորդաց՝ որ  
շատ ՚ի շուրջ են եկել , լսել են և տե-  
սել . և ՚ի մեծունաց՝ որ շատ իմաս-  
տունք են տեսել :

ԽՄԱՍՏՈՒՆՔՆ զմարդ երեք իրօք  
ձանաշեն . երեսին կերպարանօքն , խօ-  
սօք լեզուին և գործովք . յառաջն ՚ի  
յերեսն հային՝ զի երեսն սրտին հայե-  
լի է . և յետ այնոր խօսօք ձանաշին՝  
որ ՚ի սրտէն յառաջ գայ . և ապա գոր-  
ծոցն միտք դնեն , զի հետ ինչ մարդ-  
կանց շրջի մարդ՝ գիտացիք որ զայնոց  
գործքն կուսիրէ : Ա ասն որոյ ով սի-  
րելի եղասյր , զաքքդ աստուածային  
օրինօքն դաստիարակէ , և զբերանդ  
քո լից աստուածեղէն հոգւով , զի ՚ի  
խօսելն քո շնորհս տացես լսողաց :  
Իւանի ձշմարտութեն սննդակից լեր ,

արդարութեան գործոց սիրող . սիրե-  
լով զսիրողս լի խտուծոյ և զպատուի-  
րանս նորա կատարողս , զսուրբս և  
զարդարս և զիմաստունս . զի ընդ  
սուրբս սրբիս և ընդ արդարս արդա-  
րանաս և ընդ իմաստունս լուսաւորիս :

Օ ՈՐ ՕՐԻՆԱԿ որ աղքատ մարդ ՚ի  
շուկայն մտնու , աչօքն շատ կերակուր  
և հանդերձ տեսնու , երբ գին չունի՝  
քաղցած և մերկ ելանէ . նոյնպէս  
մարդն որ յաշխարհի և զհոգւոյն  
բանն չգիտէ և օրինացն խրատի չիլսէ ,  
և զգրոց պատուիրանն չի հասկանայ ,  
՚ի մէջ ամենայն բարոյ մերկ և տա-  
ռապեալ քաղցած և ծարաւ կայ ՚ի  
հոգեւոր բարեաց :

ԽԸՆԱՆԻՆ երեք իրք պիտի . լի աջին  
այն որ զբնութիւնն հետ ժամանակին  
սահմանէ , զինչ ժամանակն լինի՝ զիւր  
բնութիւնն յայնոր վերայ զորդէ : Եր-  
կրորդ այն է որ գիտենայ՝ որ այն ոք որ  
դիմադարձք են՝ համարձակութեամբ  
ու քաջութեամբ հաւնեցընէ . և երբ  
այսով չկարէ՝ նա սիրով ու ողոքանօք  
ու տուրք տալով . բայց զտեղն ընտրէ  
թէ աս երկուցս որին պիտի : Երրորդ  
այս է , որ մարդ որ իւր ձեռացն ներքե-  
է ու իր դիմահայեաց , հետ այնոց  
բարեմիտ լինի ու կամենայ որ ՚ի հաց  
և ՚ի յապրանք հասանին :

ԽԸՆԱՆՆ երեք իրք զմտաւ պիտի  
ածել որ անիրաւ բան չառնէ . նախ  
այս , որ գիտենայ թէ այնոք որ ընդ  
ձեռամբն են՝ մարդիք են լի խտուծոյ  
ստեղծած ՚ի մին հողոյ որպէս ինքն ,  
և չունին ինչ պակասութի բայց միայն  
զիշխանութիւն : Երկրորդ այս է , որ  
գիտենայ թէ ինքն այլ ընդ իշխանու-  
թեամբն լի խտուծոյ է : Երրորդ որ  
ինքն գիտենայ թէ ինքն չէ միշտ իշ-  
խան՝ այլ անցաւոր : Ար զայսոսիկ ՚ի  
մտի պահէ՝ նա անիրաւ գործ չառնէ .